



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱԴՐՈՒԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՆՈՐ

ԿԻՐԱԿԻ, 23 Փետրուար 2020

151

DIMANCHE, 23 Février 2020



ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Carnaval – Début du Carême

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Այս Կիրակիէն սկսեալ՝ Մեծ Պահքի ամբողջ տևողութեան Սուրբ Պատարագը կը մատուցուի փակեալ խորանով, ի նշան Ադամի եւ Եւայի Դրախտէն արտաքսումին:

Մեծ Պահքի ընթացքին՝ Աւետարանը չեն համբուրեր եւ Պատարագի ընթացքին «Ողջոյն» չեն և փոխանակեր:

A partir de ce dimanche et pendant toute la durée de Carême, la Sainte Messe est célébrée derrière le rideau fermé en signe d'expulsion du Paradis d'Adam et d'Ève.

Au cours du Carême, on n'embrasse plus l'Évangile et l'on n'échange plus le baiser de paix pendant la Messe.

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՈՈՍԷԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՏ ՆԱՄԱԿԷՆ 13.11-14.25
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6.1- 21

Les lectures de la Bible d'aujourd'hui

ROMAINS 13.11-14.23
MATTHIEU 6.1-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔՉՆՅ. ԱԲԵԱՆ
Հոգեւոր Հովիւի օգնական

Célébrant:
RÉV. PÈRE GEVORG APYAN
Assistant de Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organist: M. Henry Farmer

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՀՌՈՍԷԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՏ ՆԱՄԱԿԷՆ 13.11-14.25

11Նաեւ գիտնանք ատենը՝ թէ արդէն ժամն է քունէն արթննալու, որովհետեւ հիմա մեր փրկութիւնը աւելի՛ մօտ է՝ քան երբ հաւատացինք: 12Գիշերը շատ յառաջացած է, ու ցերեկը՝ մօտեցած. ուրեմն թօթափէ՛նք խաւարին գործերը, ու հազնի՛նք յոյսին գրահը: 13Վայելչութեամբ ընթանանք, ինչպէս ցերեկ ատեն, ո՛չ թէ զեխութեամբ ու արբեցութեամբ, ո՛չ թէ խառնակ անկողնով եւ ցովութեամբ, ո՛չ թէ կռիւով ու նախանձով. 14հապա հազէ՛ք Տէր Յիսուս Զրիստոսը, եւ մի՛ մտադրէք մարմնին ցանկութիւնները գոհացնել:

1Ընդունեցէ՛ք հաւատքի մեջ տկար եղողը՝ առանց քննադատելու կարծիքները. 2քանի որ մէկը կը հաւատայ թէ ամէն բան կրնայ ունել, իսկ ուրիշ մը՝ որ տկար է՝ բանջարեղէն կ'ուտէ: 3Ան որ կ'ուտէ՝ թող չանարգէ չլսողը, եւ ան որ չ'ուտէր՝ թող չդատէ ուսողը, որովհետեւ Աստուած ընդունած է զայն: 4Դուն ո՛վ ես՝ որ կը դատես ուրիշին ծառան. հաստատուն կենայ կամ ինչայ՝ իր իսկական Տէրոջ համար է: Բայց կանգուն պիտի պահուի, որովհետեւ Աստուած կարող է կանգուն պահել զայն:

5Մէկը կը նկատէ օր մը ուրիշէ մը գերադաս, միւսն ալ կը նկատէ բոլոր օրերը հաւասար. իւրաքանչիւրը լման համոզուած թող ըլլայ իր միտքին մեջ: 6Ան որ համարում կ'ընծայէ մէկ օրուան՝ Տէրոջ համար համարում կ'ընծայէ, իսկ ան որ համարում չ'ընծայեր մէկ օրուան, Տէրոջ համար համարում չ'ընծայեր: Ան որ կ'ուտէ՝ Տէրոջ համար կ'ուտէ, քանի որ Աստուծմէ շնորհակալ կ'ըլլայ. իսկ ան որ չ'ուտէր, Տէրոջ համար չ'ուտէր, բայց Աստուծմէ շնորհակալ կ'ըլլայ: 7Արդարեւ մեզմէ ո՛չ մէկը ինքնիրեն համար կ'ապրի, կամ ինքնիրեն համար կը մեռնի. 8քանի որ եթէ ապրինք՝ Տէրոջ համար կ'ապրինք, ու եթէ մեռնինք՝ Տէրոջ համար կը մեռնինք: Ուրեմն թէ՛ ապրինք եւ թէ մեռնինք՝ մենք Տէրոջն ենք: 9Որովհետեւ Զրիստոս սա՛մ նպատակով մեռաւ ու վերապրեցաւ, որպէսզի Տէր ըլլայ թէ՛ մեռելներուն եւ թէ ողջերուն:

10Իսկ դուն ինչո՛ւ կը դատես եղբայրդ, կամ ինչո՛ւ կ'անարգես եղբայրդ, քանի բոլորս ալ պիտի ներկայանանք Զրիստոսի դատարանը:

11Արդարեւ գրուած է. «Ես կ'ապրի՛մ, - կ'ընէ Տէրը. - ամէն ծունկ պիտի կքի իմ առջեւ, եւ ամէն լեզու պիտի դաւանի զիս իբր Աստուած»:

12Ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը հաշիւ պիտի տայ Աստուծոյ՝ ինքնիրեն համար:

13Ուստի ա՛լ չդատենք զիրար. այլ մանաւանդ սա՛մ վճռեցէք, որ ո՛չ մէկը սայթաքում կամ զայթակողութիւն դնէ իր եղբօր առջեւ: 14Գիտե՛մ, ու համոզուած եմ Տէր Յիսուսով, թէ ոչի՛նչ ինքնիրմէ պիղծ է. բայց ո՛վ որ պիղծ կը սեպէ որեւէ բան, անո՛ր համար պիղծ է ատիկա: 15Սակայն եթէ եղբայրդ տրտմի կերակուրի համար, ա՛լ սիրով չես ընթանար. քու կերակուրովդ մի՛ կորսնցներ ան՝ որուն համար Զրիստոս մեռաւ: 16Ուրեմն հայիոյութիւն թող չըլլայ ձեր բարիին համար, 17քանի որ Աստուծոյ թագաւորութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն՝ Սուրբ

Հոգիով: 18Արդարեւ ո՛վ որ այս կերպով Քրիստոսի կը ծառայե՛ Աստուծոյ հաճելի ու մարդոցմէ գնահատուած է: 19Ուրեմն հետամո՛տ ըլլանք այն բաներուն՝ որոնք խաղաղութիւն կը հայթայթեն, եւ այն բաներուն՝ որոնցմով շինութիւն կ'ըլլայ իրարու: 20Մի՛ քանզի Աստուծոյ գործը կերակուրի համար: Արդարեւ բոլոր բաները մաքուր են. սակայն գէշ են այն մարդուն համար՝ որ կ'ուտէ գայթակղեցնելով: 21Լաւ է ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ որեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը սայթաքի, կը գայթակղի կամ կը տկարանայ: 22Դուն հաւատք ունիս. քեզի՛ վերապահէ զայն՝ Աստուծոյ ամօքն. երանի՛ անոր, որ չի դատապարտեր ինքզինք անով՝ որ ինք կը գնահատէ՛: 23Բայց ան որ կը տատամսի, եթէ ուտէ՛ կը դատապարտուի, քանի որ հաւատքով չէ որ կ'ուտէ. արդարեւ ամէն ինչ որ հաւատքով չէ՛ մեղք է:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6.1- 21

1«Չգուշացէ՛ք որ ձեր ողորմութիւնը չընէք մարդոց ամօքն՝ տեսուելու համար անոնցմէ. այլապէս՝ վարձատրութիւն չէք ունենար ձեր Հօրմէն, որ երկինքն է: 2Ուրեմն երբ ողորմութիւն ընես, փող մի՛ հնչեցնէր ամօքնդ, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններուն ու փողոցներուն մէջ, որպէսզի փառաւորուին մարդոցմէ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը”»: 3Իսկ դո՛ւն՝ երբ ողորմութիւն ընես՝ ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռքիդ ի՛նչ տալը, 4որպէսզի քու ողորմութիւնդ գաղտնի ըլլայ. եւ քու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, բացայայտօրէն պիտի հատուցանէ քեզի»:

5«Երբ աղօթես՝ նման մի՛ ըլլար կեղծաւորներուն, որոնք կը սիրեն աղօթել՝ կայնելով ժողովարաններուն մէջ ու հրապարակներուն անկիւնները, որպէսզի երեւնան մարդոց: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը”»: 6Իսկ դո՛ւն՝ երբ աղօթես՝ մտի՛ր ներքին սենեակդ, գոց՛ դուռդ, եւ աղօթ՛ Հօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի. ու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, բացայայտօրէն պիտի հատուցանէ քեզի:

7Երբ աղօթէք, շատախօս մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որովհետեւ կը կարծեն թէ պիտի ընդունուին՝ իրենց շատ խօսելուն համար: 8Ուրեմն մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ձեր պետքերը՝ դեռ դուք չիսկրած իրմէ: 9Ուստի դուք սա՛պէս աղօթեցէք.

“Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. 10քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝՝ Նոյնպէս երկրի վրայ:

11Մեր ամէնօրեայ հացը՝ մեզի տո՛ւր պսօր.

12մեզի ներե՛ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն.

13ու մեզ մի՛ տանիր փորձութեան, հապա մեզ ազատէ՛ Չարէն. որովհետեւ քո՛ւնկը եւ թագաւորութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեան. ամէն՝:

14Արդարեւ եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի. 15Իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր յանցանքները»:

16«Երբ ծոմ պահեք, տրտումբերս մի՛ ըլլաք՝ կեղծաւորներուն պէս. որովհետեւ իրենց երեսները կը խաթարեն, որպէսզի երեւնան մարդոց՝ թէ ծոմ կը պահեն: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը»: 17Բայց դո՛ւն՝ երբ ծոմ պահես՝ օձէ՛ գլուխդ ու լուս՝ երեսդ, 18որպէսզի չերեւնաս մարդոց՝ ծոմ պահողի պէս, հապաքու Յօրոյ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի: Եւ քու Յայրո՛րդ որ կը տեսնէ գաղտնիքը, պիտի հատուցանէ քեզի»:

19«Երկրի վրայ գանձեր մի՛ դիզէք ձեզի, ուր ցեցը եւ ժանգը կ'ապականեն, ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան: 20Հապաք երկի՛նքը գանձեր դիզեցէք ձեզի, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն, ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: 21Որովհետեւ ձեր գանձը ո՛ր որ է, ձեր սիրտն ալ հո՛ն պիտի ըլլայ»:

Romains 13.11-14.23

11Même vu la saison, parce qu'il est déjà temps de nous réveiller du sommeil; car maintenant le salut est plus près de nous, que lorsque nous avons cru. 12La nuit est passée et le jour est approché; rejetons donc les œuvres de ténèbres, et soyons revêtus des armes de lumière. 13Conduisons-nous honnêtement [et] comme en plein jour; non point en gourmandises, ni en ivrogneries; non point en couchés, ni en insolences; non point en querelles, ni en envie. 14Mais soyez revêtus du Seigneur Jésus-Christ; et n'ayez point soin de la chair pour [accomplir] ses convoitises. 15Or quant à celui qui est faible en la foi, recevez-le, et n'ayez point avec lui des contestations ni des disputes. 16L'un croit qu'on peut manger de toutes choses, et l'autre qui est faible mange des herbes. 17Que celui qui mange [de toutes choses], ne méprise pas celui qui n'en mange point; et que celui qui n'en mange point, ne juge point celui qui en mange : car Dieu l'a pris à soi. 18Qui es-tu toi, qui juges le serviteur d'autrui? s'il se tient ferme ou s'il bronche, c'est pour son propre maître; et même [ce Chrétien faible] sera affermi; car Dieu est puissant pour l'affermir. 19L'un estime un jour plus que l'autre, et l'autre estime tous les jours [également, mais] que chacun soit pleinement persuadé en son esprit. 20Celui qui a égard au jour, y a égard à cause du Seigneur; et celui aussi qui n'a point égard au jour, il n'y a point d'égard à cause du Seigneur; celui qui mange [de toutes choses], en mange à cause du Seigneur, et il rend grâces à Dieu; et celui qui n'en mange point, n'en mange point aussi à cause du Seigneur, et il rend grâces à Dieu. 21Car nul de nous ne vit pour soi-même, et nul ne meurt pour soi-même. 22Mais soit que nous vivions, nous vivons au Seigneur; ou soit que nous mourions, nous mourons au Seigneur; soit donc que nous vivions, soit que nous mourions, nous sommes au Seigneur. 23Car c'est pour cela que Christ est mort, qu'il est ressuscité, et qu'il a repris une nouvelle vie; afin qu'il domine tant sur les morts que sur les vivants. 24Mais toi pourquoi juges-tu ton frère? ou toi aussi, pourquoi méprises-tu ton

frère? certes nous comparâtrons tous devant le siège judiciaire de Christ. 11Car il est écrit : je suis vivant, dit le Seigneur, que tout genou se ploiera devant moi, et que toute langue donnera louange à Dieu. 12Ainsi donc chacun de nous rendra compte pour soi-même à Dieu. 13Ne nous jugeons donc plus l'un l'autre; mais usez plutôt de discernement en ceci, [qui est] de ne mettre point d'achoppement ou de scandale devant [votre] frère. 14Je sais et je suis persuadé par le Seigneur Jésus, que rien n'est souillé de soi-même; mais cependant si quelqu'un croit qu'une chose est souillée, elle lui est souillée. 15Mais si ton frère est attristé de te [voir manger] d'une viande, tu ne te conduis point [en cela] par la charité; ne détruis point par la viande celui pour lequel Christ est mort. 16Que l'avantage dont vous jouissez ne soit point exposé à être blâmé. 17Car le Royaume de Dieu n'est point viande ni breuvage; mais il est justice, paix, et joie par le Saint-Esprit. 18Et celui qui sert Christ en ces choses-là, est agréable à Dieu, et il est approuvé des hommes. 19Recherchons donc les choses qui vont à la paix, et qui sont d'une édification mutuelle. 20Ne ruine point l'œuvre de Dieu par ta viande. Il est vrai que toutes choses sont pures, mais celui-là fait mal qui mange en donnant du scandale. 21Il est bon de ne point manger de viande, de ne point boire de vin, et de ne faire aucune autre chose qui puisse faire broncher ton frère, ou dont il soit scandalisé, ou dont il soit blessé. 22As-tu la foi? aie-la en toi-même devant Dieu. [Car] bienheureux est celui qui ne condamne point soi-même en ce qu'il approuve. 23Mais celui qui en fait scrupule, est condamné s'il [en] mange, parce qu'il n'[en mange] point avec foi; or tout ce qui n'est point de la foi, est un péché.

Matthieu 6.1-21

1Prenez garde de ne faire point votre aumône devant les hommes, pour en être regardés; autrement vous n'en recevrez point la récompense de votre Père qui est aux cieux. 2Lors donc que tu feras ton aumône, ne fais point sonner la trompette devant toi, comme les hypocrites font dans les Synagogues, et dans les rues, pour en être honorés des hommes; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense. 3Mais quand tu fais ton aumône, que ta main gauche ne sache point ce que fait ta droite. 4Afin que ton aumône soit dans le secret, et ton Père, qui voit [ce qui se fait] en secret t'en récompensera publiquement. 5Et quand tu prieras, ne sois point comme les hypocrites; car ils aiment à prier en se tenant debout dans les Synagogues et aux coins des rues, afin d'être vus des hommes; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense. 6Mais toi, quand tu pries, entre dans ton cabinet, et ayant fermé ta porte, prie ton Père, qui [te voit] dans ce lieu secret; et ton Père qui te voit dans ce lieu secret, te récompensera publiquement.

7Or quand vous priez, n'usez point de vaines redites, comme font les Païens; car ils s'imaginent d'être exaucés en parlant beaucoup. 8Ne leur ressemblez donc point; car votre Père sait de quoi vous avez besoin, avant que vous le lui demandiez.

9Vous donc priez ainsi : notre Père qui es aux cieux, ton Nom soit sanctifié.

10Ton Règne vienne. Ta volonté soit faite sur la terre comme au ciel.

11Donne-nous aujourd'hui notre pain quotidien. 12Et nous quitte nos dettes, comme nous quittons aussi [les dettes] à nos débiteurs.

13Et ne nous induis point en tentation; mais délivre-nous du mal. Car à toi est le règne, et la puissance, et la gloire à jamais. Amen.

14Car si vous pardonnez aux hommes leurs offenses, votre Père céleste vous pardonnera aussi [les vôtres]. 15Mais si vous ne pardonnez point aux hommes leurs offenses, votre Père ne vous pardonnera point non plus vos offenses.

16Et quand vous jeûnerez, ne prenez point un air triste, comme font les hypocrites; car ils se rendent tout défaits de visage, afin qu'il paraisse aux hommes qu'ils jeûnent; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense.

17Mais toi, quand tu jeûnes, oins ta tête, et lave ton visage; 18Afin qu'il ne paraisse point aux hommes que tu jeûnes, mais ton Père qui est présent dans [ton] lieu secret; et ton Père qui te voit dans [ton] lieu secret, te récompensera publiquement.

19 Ne vous amassez point des trésors sur la terre, que les vers et la rouille consomment et que les larrons percent et dérobent. 20 Mais amassez-vous des trésors dans le ciel, où ni les vers ni la rouille ne consomment rien, et où les larrons ne percent ni ne dérobent. 21Car où est votre trésor, là sera aussi votre cœur.



ՇԱԲԹՈՒԱՅ ՊԱՏՉԱՍԱՆ

ԱՂԱՄ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՂԻՆ

«Աղամ Աստուծոյ որդին է» (ՂՈՒԿ. Գ 38), քանի որ ան Աստուծմէ ստեղծուեցաւ: Աղամ, իբրեւ Աստուծոյ «մարդեղէն որդի»ն՝ կատարեալ էր, քանի որ Աստուծոյ ստեղծածն էր, եւ Աստուած կատարեալ է եւ Անոր գործն ալ նոյնպէս եւ մի՛շտ կատարեալ է: Աղամ այնպէս ստեղծուած էր որ իր կամքը գործածելով իր Արարչին հնազանդ ըլլար եւ իրեն ընծայուած կեանքին օրհնութիւնները վայելելու առիթը ունենար, եւ կամ գիտակցաբար՝ իր կամքով անհնազանդ ըլլար:

Արարչին հնազանդութիւնը եթէ կեանքը վայելել է, անհնազանդութիւնն ալ պատճառ է որ կորսնցնէ Աղամ իր կեանքը եւ կեանքի բոլոր իրաւունքները: Արդարեւ «ազատ կամք»ի բնական հետեւանքն է ասիկա: Յետեւաբար, Աղամ կատարեալ ըլլալով հանդերձ, իր հաւատարմութիւնը եւ հնազանդութիւնը փորձուելու ենթակայ էր: Աղամ գիտակցաբար մեղանչեց՝ եւ այդպէս դադրեցաւ «Աստուծոյ որդի»ն ըլլալէ. «Աղամ չէր որ խաբուեցաւ» (Ա ՏԻՄ. Բ 14), հետեւաբար՝ կամովին եւ գիակցաբար ընտրած մեղքին համար ան մահուան դատապարտուեցաւ եւ որոշ ատենին մեռաւ, իր բոլոր զաւակները, մենք եւ մեր նախահայրերը, անոր մեղանչելէն վերջ ծնած ըլլալով, նոյն դատապարտութեան ենթարկուեցանք:

Աղամի զաւակները կրնային կամովին Աստուծոյ ծառայել իրենց «անկատար կարողութիւններ»ուն ներած չափով, եւ կամ՝ կրնային իրենց կեանքին սակաւաթիւ տարիներուն իրենց սիրտը կարծրացնել Անոր բարութեանը նկատմամբ:

«Ձեզի ընտրեցէք այսօր թէ որո՛ւ պիտի ծառայէք... Բայց ես եւ իմ տունս Աստուծոյ պիտի ծառայենք» (ՅԵՍ. ԳԴ 15): Սակայն նոյնիսկ անոնք որ հաստատ կերպով մտադրած էին Աստուծոյ ծառայել՝ անգործ էին իրենց ան-

ձերուն համար յաւիտեանական կեանք ձեռք բերել առանց Աստուծոյ օգնութեանը:

«Մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, եւ այն մեղքէն մահը, եւ այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանի որ ամէնը մեղանչեցին» (ՅՌՈՄ. Ե 12), կ'ըսէ Պօղոս առաքեալ, ակնարկելով Ադամի մեղանչումին:

Եւ իբրեւ կատարեալ մարդ մը՝ Յիսուս Նախկին «կատարեալ մարդ» Ադամի համահաւասար աստիճան ունէր. արդա՛ր, անմե՛ղ, անթերի՛ մարդեղէն արարած ըլլալով. Ան կատարեալ մարդ էր. «Թեպետ Աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ՝ թէ ինչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս, կատարեալ ըլլալէ ետք, յաւիտեանական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար՝ որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդեկ քահանային պէս» (ԵԲԲ. Ե 8-10): Իր անթերի հնազանդութեամբ Յիսուս ոչ միայն իր Ֆիզիքական՝ հապա նաեւ իր նուիրման կատարելութիւնը ցոյց տուաւ իր Հօրը, եւ ատոր համար Ան խիստ բարձրացուեցաւ եւ մեծ Զահանայապետը եղաւ որ «բուն երկինք»ը մտնէ եւ իր մարդկային կատարեալ զոհագործութեան արժանիքը ընծայէ, բոլոր իրեն հնազանդողներուն համար:

Ուստի Ադամի որդեգրածէն տարբեր ուղղութեան մը հետեւելով, որ Աստուծոյ օրէնքին չհնազանդելով ամբողջ մարդկութիւնը մահուան ենթարկած էր, Յիսուս իբրեւ փառաւորեալ Զահանայապետ այդ փրկագինը երկնից մէջ ներկայացնելով՝ ի վիճակի է Ադամի զաւակներուն մէջ գտնուող հաւատացեալները ազատել այն ժառանգական անկարողութիւններէն՝ որոնց ներքեւ ծնած էին: Իր զոհագործութեան արժէքը անոնց հաշւոյն գործածելով՝ Ան զանոնք կը գնէ, մեղքէ եւ մահէ կը փրկէ, որպէսզի անոնք Հօրը առջեւ արդարանան Որդւոյն միջոցաւ. (Ա ԿՈՐՆԹ. 2 20, Է 23):

Ադամ այդ փրկուածներէն չէ: Զանի որ ան կամովին, գիտակցաբար մեղանչեց. արդարօրէն մահուան դատապարտուեցաւ եւ մեռա՛ւ, եւ Աստուած չէր կրնար իր արդար դատաստանը փոխել եւ կեանք շնորհել Ա-

դամի: Աստուած ողորմած է բայց նաեւ՝ արդար: Ուստի Ադամ կատարեալ կեանք մը ունէր եւ կորսնցուց գայն:

Փրկանքը Ադամի համար որեւէ կարգադրութիւն չէ ըրած: Սակայն՝ ինչ որ Ադամ ըրաւ իրմէ վերջ ծնած իր խոշոր ընտանիքին համար, ասոր ճիշդ հակառակը՝ Յիսուս Զրիստոս հաւատացեալները համապատասխան գնով մը կը փրկէ:

Այդ փրկագինն արժէքը գործածելով՝ Յիսուս Ադամի ընտանիքին «շատերեուն վրայէն ժառանգական դատապարտութիւնը կը վերցնէ, եւ անոնք կ'ըլլան փրկուած»-ները:

«Բոլոր մարդոց կեանքի արդարութեան շնորհք եղաւ Յիսուս Զրիստոսի միջոցաւ» (ՅՌՈՄ. Ե 18): Ուստի անհատ մը իր բռնած ընթացքով կը վճռէ թէ ինք ի վերջոյ Զրիստոսի փրկանքի գոհագործութենէն օգուտ պիտի ստանա՞յ թէ ոչ: Փրկանքի արժէք եւ կեանք բռնութեամբ չի տրուիր գիտակցօրէն ամբարշտութիւն ընողներուն, Աստուծոյ կարգադրութեան նկատմամբ խստասրտութիւն ցոյց տուողներուն, այլ. «Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտեանական կեանք ունի. եւ ան որ Որդւոյն չի հնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ» (ՅՈՎՅ. Գ 36): Այսպէս երեւան կը բերուի Աստուծոյ, Մեծ Փրկչին անաչառութիւնը:

Աստուծոյ յիշողութեանը մէջ գտնուող մեռեալներուն յարութիւնը եւ ի վերջոյ անոնց կեանք ստանալը միեւնոյն փրկանքի կարգադրութեան հետ կապուած է: Յիսուս իր Անձը «փրկանք» տուաւ այն ամէնուն համար՝ որ գինք իբրեւ Միջնորդ ընդունելով Աստուծոյ հետ ուխտ կ'ընեն. (ՏԻՄ. Բ 5-6): Փրկանքը պարտականութիւն մը եւ սքանչելի պատահութիւն մըն է անկէ օգտուողներուն համար:

Աղբիւր՝
ՄԱՇՏՈՑ ԸԱՅԱՆԱՅ ԳԱՓԱՔԾԵԱՆԻ
քարոզներէն

ՇԱԲԹՈՒՆ ԱՂՕԹԸ



ԱՂՕԹՔ ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութեամբդ, ով Քրիստոս Փրկիչ մեր, որ մտքէ ու խելքէ շատ վեր է, ամուր եւ անվնաս պահէ զմեզ ամէն չարութենէ, հաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկրպագուներուդ հետ, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ քեզի երկրպագութիւն կ'ընեն, վասնզի Ամենասուրբ Երրորդութեանդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre sauveur, dans ta paix qui dépasse toutes pensées et paroles, fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal; mets-nous au rang de tes vrais adorateurs, qui t'adorent en esprit et en vérité, car à la très Sainte Trinité conviennent la gloire, la souveraineté et l'honneur, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.



ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե՛.-

- **Հակառակ անոր որ Հայոց Եկեղեցւոյ զաւակ եմ եւ զիս հաւատացեալ կը համարեմ, բայց եկեղեցի շատ հազուադէպ կ'երթամ: Դժբախտաբար չեմ յիշեր, թէ վերջին անգամ ե՞րբ հաղորդուած եմ:**

Յակոբոս առաքեալը իր ընդհանրական թուղթին մէջ կ'ըսէ. **«Ինչպէս մեռած է մարմինը առանց հոգիին, այնպէս ալ հաւատքը՝ առանց գործերու»** (Յակ. 2.26): Մարդիկ տարբեր ձևով կը հասկնան **«հաւատացեալ ըլլալ»** արտայայտութիւնը: Մեր օրերուն շատերն անգամ այս խօսքը կը նոյնացնեն աղանդաւորութեան հետ, ինչ որ այդ կ'ենթադրէ աներեր հաւատք Աստուծոյ հանդէպ, ուղղափառ դաւանանքի իմացութիւն եւ գործնական հաւատք, այլ խօսքով՝ պատասխանատուութիւն, յանձնառութիւն եւ գործօն մասնակցութիւն Քրիստոսի Մարմինին՝ Եկեղեցւոյ կեանքին: Այս տեսանկիւնէն քրիստոնէայի կրաւորական կեցուածքը անընդունելի է եւ դատապարտելի: Ճիշդ է, Մկրտութիւնը հոգեւոր կեանքի սկիզբն է, բայց ոչ վերջը, քանզի անկէ յետոյ ալ մենք յաճախ մեղքեր կը գործենք: Բայց երբ կ'ապաշխարհենք եւ կը հաղորդուինք, կը ներուին մեղքերը եւ կրկին յարութեան յոյսը կ'արթննայ մեր մէջ: Ս. Հաղորդութիւնը այն միակ կերակուրն է, որ մեզի միշտ անհրաժեշտ է: Յիսուս շատ յստակ ըսած է, որ առանց Իր Մարմինն ու Արիւնը ճաշակելու, չենք կրնար երկինքի արքայութիւն մտնել, ըսել է թէ՛ փրկուիլ: Հետեւաբար՝ առանց Ս. Հաղորդութեան չկայ քրիստոնէայի կեանք: Եթէ մէկը իրեն հաւատացեալ կը համարէ, ապա պէտք է գործնականին մէջ ցոյց տայ անիկա, քանզի Վերջին դատաստանի ժամանակ մեր փոխարէն պիտի խօսին մեր գործերը:

- **Յաճախ կարելի է լսել նման արդարացում՝ մոռցայ եւ մէկ գաւաթ սոււրճ խմեցի, կրնա՞մ հաղորդուիլ:**

Այս անլուրջ մօտեցում է Ս. Հաղորդութեան, քանզի քրիստոնէան միշտ պէտք է զգօն, աչալուրջ եւ աւելի խստապահանջ ըլլայ յատկապէս իրեն հանդէպ: Եթէ մարդ գիտէ, որ վաղը կամ որեւէ օր Ս. Հաղորդութիւն պիտի ստանայ, ապա պարտաւոր է պատրաստուիլ իր ուժերուն չափով՝ ուշադրութիւն դարձնելով ամէն ինչի, այս պարագային երկրորդական կամ աւելորդ բաներ չկան: Հնարաւոր չէր դիմանալ գայթակղութեան եւ հրաժարիլ առաօտեան ասանդական սուրճէն կամ թէյ խմելէն. Ի հարկէ անհնար չէ: Երբեմն ծուլութիւնը, անզգօնութիւնը կը շեղէ մեզ ճշմարիտ ճանապարհէն: Նման պարագաներուն աւելի լաւ է չհաղորդուիլ, որպէսզի յաջորդ անգամ պատրաստ մօտենանք Ս. Հաղորդութեան:

ՄՐԲՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ

Հայ եկեղեցւոյ տօներէն ամենէն ժողովրդական եւ կրօնագ-
գային բնոյթ ունեցողը՝ Վարդանանց տօնն է:

Ան խղճի, հաւատքի եւ ժողովորդի մը ինքնուրոյնութեան եւ
ազատութեանց վրայ ի գործ դրուած բռնութիւններու դէմ, հա-
յուրեան համընդհանուր ընդվզումին, անհուն զոհողութիւննե-
րու յանձառութեանց եւ գիտակցուած վեճմ նահատակութիւն-
ներու խորհրդանշիչն է, որ ոչ միայն Հայոց համար հպարտա-
ռիթ աւանդ մըն է, այլ եւ ուսանելի էջ մը ընդհանուր ազգերու
պատմութեան մէջ:

ԱՄԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ



Պարսիկներու թագաւոր Յագ-
կերտը 450 թուականին հրովար-
տակ մը դրկեց հայ ժողովորդին եւ
հրամայեց, որ հայերը հեռանալով
Քրիտոնէութենէն կրկին կռապաշտ
դառնան: Սակայն հայերը մերժե-
ցին պարսիկ թագաւորին հրամա-
նը եւ ապստամբեցան Պարսկաս-
տանի դէմ: 451 թուականի Մայի-
սին պարսիկները 300 հազարանոց
բանակով մը, հայերը հնազանդեց-
նելու համար Հայաստանի վրայ
յարձակեցան, հայոց սպարապետ
Վարդան Մամիկոնեանը իր 66 հա-
զարանոց բանակով ընդառաջ

գնաց եւ Տղմուտ գետին եզերքը ճակատեցաւ թշնամիին դէմ,
Վարդանին ընկերացաւ Ղեւոնդ Երեց իր հաչով եւ Աւետա-
րանով: Չինուորական պատրաստութեան հետ հոգեւոր
պատրաստութիւն ալ տեսան, որովհետեւ համոզուած էին որ
մարտիրոսութեան կ'երթային: Ղեւոնդ Երեց պատարագեց եւ
հաղորդեց բոլոր զինուորները: Յարձակումը հայկական այ-
րուծին սկսաւ եւ անցնելով Տղմուտ գետը սկսաւ հերոսական
ճակատամարտը: Երեկոյեան դաշտը դիակներով ծածկուած
էր, Վարդանի հետ նահատակուեցան նաեւ 1036 քաջարի զին-
ւորներ, իսկ պարսիկները եռապատիկ անելի մարդ կորսնցու-
ցին: Վարդանի նահատակութենէն ետք հայ բանակը նահան-
ջեց, սակայն հայերը իրենց ցոյց տուած հերոսութեամբ բարո-
յական այնպիսի յաղթանակ մը տարին, որ դարերը չկրցան
ջնջել անոր փառքը:

**ՄԵԶԻ ՄԻԱՑԷՔ՝
ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՄԵՆԱՄԵԱՅ
ՀՈԳԵՆՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ**

Ըստ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ օրացոյցին, այս կիրակի Բուն Բարեկենդան է. այսինքն դէպի Մեծ Պահքի օրհնւած շրջանը առաջնորդող կիրակին: Մեծ Պահքը 40 օրուայ շրջան մըն է որ կը սկսի Բուն Բարեկենդանին յաջորդող երկուշաբթին եւ կը վերջանայ Ծաղկազարդի կիրակին: Մեծ Պահքը տարբեր մարգարէներու եւ աստուածաշունչի մէջ նշուող անձերու մեկուսացման եւ ծոմապահութեան, ինչպէս նաեւ մեր Տիրոջ կատարած 40 օրուայ ծոմապահութեան օրինակներուն վրայ հիմնւած է: Մեծ Պահքը երէք սկզբունքներ ունի՝ աղօթք, ծոմապահութիւն եւ բարեգործութիւն: Թէեւ այս երէք տարրերը քրիստոնէական կեանքի մէկ մասն են, բայց Մեծ Պահքի ընթացքին մենք մեր ուշադրութիւնը ալ աւելի կը կեդրոնացնենք ասոնց վրայ: Աղօթքին մէջ կեդրոնանալը մեզի կ'օգնէ որ աւելի լաւ հաղորդակցինք Աստուծոյ հետ եւ զգանք իր ներկայութիւնը: Ծոմապահութիւնը կ'օգնէ մեզի որ կրթենք մեր մարմինը եւ մարմնական ցանկութիւններէն հեռու պահենք: Վերջապէս, բարեգործութիւնը մեր հաւատքը գործադրելու հիմնական ուղիներէն մէկն է: Ինչ կը նշանակէ յայտարարել, որ մենք Քրիստոսին կը հաւատանք, երբ իրականութեան մէջ մենք չենք ըներ ինչ որ ան մեզմէ կը պահանջէ: Հիմա որ Մեծ Պահքը կը մօտենայ, այս ամենամեայ հոգեւոր ճամբորդութեան ընթացքին եկէք միանանք Հայ Եկեղեցւոյն եւ միլիոնաւոր Քրիստոնէաներուն Մեծ Պահքին Ծրագրելով մեր ամենօրեայ աղօթքի եւ ծոմ պահելու ձեր ու բարեգործութեան միջոց մը ընտրելով:

**REJOIGNEZ-NOUS
DANS LE VOYAGE SPIRITUEL ANNUEL DU CAREME**

Selon le calendrier de l'église arménienne, ce dimanche est Poon Parégentan (c'est-à-dire le dimanche qui nous mène à la saison bénie du Grand Carême). Ce week-end est une période de célébration publique pour les Arméniens en prévision de la prochaine saison

d'examen de soi, de maîtrise de soi, de jeûne et de prière. Le carême est une période de quarante jours qui commence le lundi suivant Poon Prégéttan et se termine le dimanche des Rameaux. Le carême est conçu par l'église, basé sur les exemples bibliques de la retraite et du jeûne de divers prophètes et personnalités bibliques, y compris le jeûne de notre Seigneur pendant quarante jours. Le carême repose sur trois principes: la prière, le jeûne et l'aumône. Bien que les trois



éléments font partie de la vie chrétienne, nous sommes appelés à intensifier notre attention sur ces aspects. Se concentrer sur notre discipline de prière a pour but de nous aider à mieux communiquer avec Dieu et à être en sa présence. Le jeûne nous aide à discipliner notre corps et sa dépendance aux désirs charnels. Cela nous aidera à contrôler ces désirs et à ne pas asservir nos corps à eux. Enfin, l'aumône et l'aide aux pauvres sont l'un des principaux moyens par lesquels nous mettons notre foi en action. Que signifie proclamer que nous croyons en Christ, alors qu'en fait nous ne faisons pas ce qu'il nous a demandé de faire? Alors, à l'approche du carême, veuillez envisager de vous joindre sérieusement à l'Eglise arménienne dans cet exercice annuel et ce voyage spirituel. Planifiez votre propre discipline de prière quotidienne; votre programme de jeûne (qui exclut généralement les produits venant d'animaux et les produits laitiers). Et choisissez une ou plusieurs causes pour aider ceux qui sont dans le besoin.

Շաբաթ, 22 Փետրուար 2020

Կոստանդնուպոլսյ Ս. Ժողովի 150 Հայրապետներու (381թ.)
Յիշատակութեան Օր



Ընդհանրական եկեղեցւոյ առջեւ պատմութեան տարբեր ժամանակներու ծառայած են դաւանաբանական, վարդապետական, վարչակազմակերպական խնդիրներ, որոնց պատասխանները տրուած են սրբագումար տիեզերական ժողովներու ընթացքին: Այդպիսի ժողովներէն էր նաեւ 381 թուականին Թեոդոսիոս կայսեր հրամանով գումարուած Կոստանդնուպոլսյ Բ տիեզերաժողովը:

Արիոսական վեճերու որպէս արդիւնք յայտնուած էր նոր հերետիկոսութիւն մը՝ գլուխ եւ պաշտպան ունենալով Պոլսյ Մակեդոն արքեպիսկոպոսը, որ կը մերժէր Ս. Զոգիի աստուածութիւնը: Սոյն խնդրով գումարուած վերոյիշեալ տիեզերաժողովը կը վերահաստատէ Նիկիոյ ժողովին ընդունուած դաւանութիւնը եւ ապա կը պաշտպանէ Ս. Զոգիի աստուած-ութեան վարդապետութիւնը՝ որդեգրելով «մի Աստուածութիւն, երեք անձիք» բանաձեւը:

**Ընդունելով սոյն տիեզերաժողովը՝ Հայ եկեղեցին կը նշէ նաեւ մասնակից
150 հայրապետներու յիշատակութեան օրը**

ՏՕՆԵՐ ԵՒ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի, 23 Փետրուար 2020

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բուն Բարեկենդանը հայերու հնագոյն տօներէն է եւ կը նշուի Չատիկէն եօթը շաբաթ առաջ: Հին ժամանակ հայկական տօներէն ամենէն ուրախն ու ամենատարածուածն էր: Անկա կը յաջորդէր Ս. Սարգիսի տօսին եւ կը տեւեր մինչեւ Մեծ պահքի նախօրեակը: Պահքերու նախորդ օրերը կը կոչուին Բարեկենդան, իսկ Մեծ պահքին կը նախորդէ Բուն Բարեկենդանը: Ուրեմն Բուն Բարեկենդանը, քանի որ կը նախորդէ ամենէն երկար պահքին:



Երկշաքաթեայ այս տօնախմբութիւնը կատակով յաճախ կ'անուանէին «փորեկենդան», որովհետեւ տօնին գլխաւոր յատկանիշը կերուխումն էր:

Անցեալին Բարեկենդանի առիթով կը կազմակերպուէին ընտանեկան խրախճանքներ՝ առատ ուտելիք, կերուխում:

Տանտիկիւնները իրենց պահած մթերքներով շռայլօրէն կը հիւրասիրէին ընտանիքին անդամները եւ հիւրերը: Տօնին կը պատրաստուէին եւ կը մասնակցէին մեծ ու փոքր:

Երկու-երեք օր առաջ կիներ եւ տղամարդիկ կը դադրեցնէին իրենց գործերը, խաղեր կը կազմակերպէին թէ՛ մեծերու եւ թէ՛ փոքրերուն հետ:

Ճերուկիները իրենց կարգին կը միանային այս կամ այն խումբին՝ «թօփ խաղայլու»: Երիտասարդները «սուրմագիլի» կամ «կուռդի» կը խաղային:

Տօնին անբաժան մասն էին ժողովրդական ներկայացումներն ու դիմակաւոր խաղերը: Ներկայացումներու ժամանակ ծիծաղախառն կատակներով կը քննադատէին մեծաւորներն ու իշխանութիւնները: Մեծ ու փոքր կը հաւաքուէին, եւ պետական ու եկեղեցական օրէնքները մէկ կողմ դրած, ամէն մարդ առանց քաշուելու իր խօսքը կ'ըսէ:

Փաստօրէն Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքէն, կերուխումէն, նաեւ ազատութեան օր էր:

Ընդհանուր առմամբ, դիմակի գործածութիւնը, սրախաղը, ձիարշաւը եւ խրախճանքները կը յատկանշէին Բարեկենդանը:

Բուն Բարեկենդանին պատանիներն ու երիտասարդները կը ծպտուէին տարբեր ձեւերով, կը մրտէին իրենց երեսը, նաեւ պարապ խիտունքներով շինուած վզկոցներ կ'անցընէին իրենց վիզէն: Իրաքանակիչ շարժումի հետ վզկոցները ծնծղայի պէս կը հնչէին եւ հաճոյք կը պատճառէին:

Աւանդութիւններ եւ սովորութիւններ

Այս առիթով կը պատրաստէին տարբեր տեսակի ճաշատեսակներ եւ քաղցր-եղէններ, կ'օգտագործուէր առատ խմիչք, իսկ հարբեցողութիւնը բնականաբար ներդի էր այդ օրերուն: Կաղանդի նման, կ'այցելէին իրարու տուն եւ կը շնորհաւորէին, կը մասնակցէին ճոխ սեղաններու խնճոյք-ներու, կը կազմակերպէին խաղեր, երգ, պար, ներկայացումներ եւ այլն...:



Տօնախմբութեան ընթացքին իրարու այցելութեան կ'երթային գլխաւորաբար ցերեկային ժամերուն: Այս փոխայցելութիւնները եւ նուիրատուութիւնները ամէլի շատ տարածուած էին նորապսակներու հարազատներուն միջեւ: Բարեկենդանին կը պահպանուէր նաեւ նորահարսերու «դարձ երթայլու» սովորոյթը: Այս օրը իրարու տօնը կը շնորհաւորէին բարեմաղթանքի հետեւեալ խօսքերով.

«Շնորհաւոր ապաշխարհանք Զրիստոսի» կամ «Շնորհաւոր բարեկենդան, բարով հասնիք սուրբ Յարութեան»:

Յատկանշական էր այն, որ խնճոյքներուն կը մասնակցէին նաեւ կիները, եթէ այլ տօներու ան կ'առանձնանար, ապա Բարեկենդանին կը տիրէր սեռի, տարիքի եւ խաւի հաւասարութիւն:

Բուն Բարեկենդանով վերջ կը տրուի ուտելիքի շռայլութեան եւ ծայր կ'առնէ **Մեծ պահքը:**

Holidays

Thursday, February 20, 2020

THE BATTLE OF VARTANANTZ

One of the most significant battles for the Armenian Nation was the Battle of Vartanantz. The battle took place on June 2, 451 on the field of Avarayr, and will long be remembered as the as the greatest spiritual and moral victory for all Armenians.

About the year 450 A.D., when Armenia had lost its own kingdom and was divided between the Byzantine and Persian Empires, Christianity was a strong force in the land.

Thus, it was, that when the Persian King Hazkert tried to abolish Christianity and turn the people back to sun worship (paganism), the Armenians proclaimed their willingness to accept the Persian mandate in all respects providing their freedom to practice Christianity remained intact. Persian refusal to accept these views laid the groundwork for further dissension by the Armenian people.

There lived in Armenia at this time, a nobleman, Vasag Suni, who with some other Armenian military leaders and noblemen leaned toward the Persian viewpoint. These men, along with other noblemen and Vartan Mamigonian, were suddenly invited to Central Persia for consultation with the King, and there, were detained and ordered to accept Sun Worship for their country. This was really part of a clever Persian conspiracy to leave Armenia without leadership and, hence, to facilitate the Persian plan to converting the common people.

After consultation amongst themselves, these imprisoned military leaders, in a plot of their own, pretended to accept the Persian demands, and thus, were returned to Armenia laden with gifts and accompanied by Persian soldiers and religious leaders who would initiate the re-conversion to paganism.

Back in Armenia, however, the people heard of the faithlessness of their leaders, and did not realize that it was a plot. Furious and indignant, they decided to fight even there own "traitorous" husbands and fathers in an attempt to keep Christianity alive at any cost!

The great Yeghishe Badmakir , who later described the Battle of Vartanantz, related in detail of the noblemen's wives who, forgetting their finery, pomp, and splendor, organized the common people and patriotically prepared to fight against their kin under the leadership of some of the military nobility who took command in the crisis.

As soon as the Armenian nobles and soldiers set foot on their own land, they overtly passed back to the side of their nation, determined to fight for Christianity to the very end, and chased back the group of Persians who had accompanied them.

Realizing that they needed military and moral aid, they appealed to another Christian people, The Greeks of the Byzantine Empire. They were refused, but their decision to fight to the end did not falter. A popular revolt broke out, led by Prince Vartan Mamigonian. Unfortunately, a group of princes, under Vasak of Suni, withdrew from the struggle and made peace with the Persians.

On the eve of the battle, all soldiers took Holy Communion in the open field of Avarayr. They listened to Hovsep Catholicos speak to them on the strength of the Christian faith. They listened to the vibrant Ghevont Yeretz, whose memorable speech has since been immortalized as the driving spirit of Vartanantz. And they listened respectfully to Vartan Mamigonian, Commander-in-Chief of the Armenia troops, give his historic speech preparing the 66,000 Armenians physically and spiritually for the holy battle.

The Battle started at dawn on June 2, 451. The 66,000 Armenians, under Vartan Mamigonian, encountered an army of 220,000 Persians, reinforced by squadrons of armed elephants, which were used as tanks at the time. The battle was a furious one, but a losing one for the vastly outnumbered Armenians. Brave Vartan Mamigonian fought to the last, and fell on the battlefield of Avarayr, as a martyr for Christianity, along with eight other generals. At the height of the battle, however, Vasag Suni and some of his followers realized the inevitable outcome, and defected to the Persians. Their traitorous conduct has not been forgiven nor forgotten by Armenians to this very day!

Although the Battle of Vartanantz was a military defeat for the Armenians, it has gone down in Armenian history as the greatest spiritual and moral victory, and is celebrated by all Armenians everywhere with pride and respect as a personification of the freedom of thought, faith, and conscience! It is the most important national and religious Holy Day.



And out of the struggle, there emerged two of the greatest figures in Armenian history: Ghevont Yeretz, spiritual leader, and Vartan Mamigonian, military leader-unsurpassed!

Sunday, February 23, 2020

THE SUNDAY OF POON PAREGENTAN

In the Armenian Church, the Fast of Great Lent begins tomorrow, the Monday after Poon Paregentan – Good Living Day.

This Sunday, the day before the beginning of the Lenten season, we enjoy the goodness of God's creation as we have a day of good living. Tomorrow we will begin our 40-day journey of Great Lent. What Great Lent becomes for each individual is really up to us. Over the years, through various traditions and "village" customs, it has become something less than what it is to be.

Great Lent is simply to be a period of time, a time that is offered to us by God to re-evaluate and re-adjust our lives. Great Lent is that phase in which we are to take the time to open the doors to the world of goodness and light God offers.

Jesus Christ Himself spoke the words of Great Lent when He said, "Repent, the time is fulfilled, and the Kingdom of God is at hand; repent and believe in the gospel." The Church and the clergy through the centuries have echoed this same message for the faithful not to waste the opportunity but to seek and discover God in their lives. Although we may look ahead in the planning of our 40-day journey, in reality, the only guarantee of life we have is this day – right now – the time that God has given to us to use as a wise steward.

The whole Lenten period, including Holy Week, is intended to be one of self-discipline, self-examination and self-appraisal. There is no one who is so holy or perfect that no room exists for moral and spiritual improvement. We all have our faults and weaknesses. Great Lent is that time for us to examine ourselves, our conscious mind, and to come to our senses to gather our courage and to do penance to correct our ways.

The Church, being in a state of penance, closes its altar curtain to physically separate us from the joyous liturgical celebration and in its stead, a simple liturgy is said. Scripture readings are longer teaching us to listen a little more attentively to the message of God contained therein.

The practice of abstinence in our churches consists of abstaining from all kinds of flesh meats, including fish, and all types of animal foods, dairy products and eggs for the forty day period. This fast is very difficult for people today to observe but yet, if desired, an accomplishment task. A less severe form of fasting suggested is for full observance the first and last week, as well as on Wednesdays and Fridays during the other weeks.

More importantly than concerning ourselves with "giving up" certain foods is our fasting from sinful [behavior, sensual pleasures, amusements and frivolous occasions; from gossiping, spreading false rumors; puffing up our egos and making others appear small; from laziness and our unwillingness to do good, especially for others. We are to spend more of our time in prayer, good works of charity, reading of scripture, dedicated church attendance for liturgy and the other Lenten services.

As our journey begins, let us pray that God be with us all to give us the strength and courage to travel with Him. May our Lenten journey lead us all to that relationship with God once enjoyed but lost due to disobedience and sinful acts.



ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ Ի ՅԻՇԱՏԱԿ

Սրբոց Վարդանանց

յիշատակույթան տօնին առիթով կը շնորհաւորենք բոլոր
Մամիկոն, Խորէն, Արտակ, Տաճատ, Հմայեակ, Ներսէհ, Վահան,

Արսէն եւ Գարեգին

անունները կրողներուն անուանակոչութիւնը:

FEAST OF THE NAME DAY
OF VARTANATZ BATTLE

On the remembrance day of the feast of Vartanantz,
we congratulate all the individuals who are named
Mamigon, Khoren, Ardag, Dajad, Hedayag, Nerseh, Vahan,
Arsen & Karekin.

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 23 ՓԵՏՐՈՒՄ 2020

REQUIEM DIMANCHE, LE 23 FEVRIER 2020

Պետիկեան եւ Անթիքաճեան ընտանիքներու,
Եւ Պոլսահայ Մշակութային Միութեան,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հարազատին՝

**ՍԵՂԱ ՊԵՏԻԿԵԱՆԻ
(SETA BEDIKYAN)**

Մահուան առաջին տարելիցին առիթով:
Հոգեճաշի մատուցում Պոլսահայ Մշակութային
Միութեան սրահին մէջ:



Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Արմինէ Շիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տարօն-Վրէժ եւ Լոռա Շիրինեանի
եւ զաւկին՝ Լիայնայի,
Տ. եւ Տիկ. Դաւիթ եւ Քրիսթին Մաքսուեսանի
եւ զաւակներուն՝ Ալեսիայի եւ Արիանայի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր,

մեծ հօր եւ մեծ մեծ հօր
**ԲԱԲԳԷՆ ՇԻՐԻՆԵԱՆԻ
(PAPKEN SIRINYAN)**

մահուան 47-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ
Իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝

**ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆԻ
(MELINE SIRINYAN)**

մահուան 10-րդ տարելիցին առիթով
ՇԻՐԻՆԵԱՆ ԵՒ ՓԱՓԱԶԵԱՆ
Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ



Աթոյեան ընտանիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր,
ՎԱԶԳԷՆ ԱԹՈՑԵԱՆԻ
(VAZKEN ATOYAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով:



ՉՈՔԵՅԱԼՎԱՏԵԱՆ ԱՐՈԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա ըր արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից ընդ:
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան ընդ:
Արա արժանի ողորմութեան քառութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս ըր
յաջակողմեան դասուն:
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:



ՅԱԻՎԿՏԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի
Չոքեւոր Չովիւն ու Ծխական Խորհուրդը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն՝
Ֆեւճեան, Վարդեան եւ Թիւրքմեն ընտանիքներուն՝
Ողբացեալներ

Ալիս Ֆեւճեանի (12 Փետրուար 2020)

Տօքթ. Վահան Վարդեանի (15 Փետրուար 2020)

Եւ Յակոբ Թիւրքմենի (18 Թետրուար 2020):

SYMPATHY & CONDOLENCES

The Parish Priest and the Parish Council of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral
express their deepest condolences to the
Fesciyan, Vartian & Turkmen families
on the loss of their beloved:

Alis Fesciyan (February 12, 2010)

Dr. Vahan Vartian (February 15, 2020) & Agop Turkmen (February 18, 2020).

ՆՈՒԲԲԱՏՈՒՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Manoir Gouin Seniors \$115, Mr. Haik Yasa \$100.

CHURCH YEARLY CALENDAR:

Mrs. Alis Afker \$30.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE AGOP TURKMEN:

Mr. & Mrs. Vahakn & Lucy Arapyan, Mrs. Manon Oztas \$50,
Mr. Kapriyel Ferah, Mr. & Mrs. Toros & Aida keskinbicak \$20.

HOKEHANKISD:

THE LATE HAYKUHI KHULYAN YESSAYAN:

Mrs. Vehanoush Yessayan \$100, Mr. Garo Kurian \$50,
Mr. Kevork Mardikian, Mrs. Silva Amadouni \$30, Mrs. Hasmig Khatchikian \$20.

THE LATE KHATCHIK KHATCHIKIAN:

Mr. & Mrs. Vahe & Silva Kardjian \$200, Mr. Michael Akkibrityan \$50,
Mrs. Hasmig Khatchikian \$20.

THE LATE HAIG ERZINGATZIAN:

Mrs. Adelaide Israelian \$250, Mr. Edward Erzingatzian \$100,
Mr. Michael Akkibrityan, Mrs. Anahid Malkasian, Mrs. Renata Israelian,
Mrs. Anne Krikorian \$50,
Mr. Bedros Arsever, Mr. Onno Met \$25.

THE LATE ALICE KALOUSTIAN- KRİKORIAN:

Mr. Khatchig Krikorian, Mr. & Mrs. Hratch Chitilian \$100,
Mr. & Mrs. Raffi & Siran Chitilian,
Mr. & Mrs. Mher & Choghig Tenkerian, Ms. Hourı Tenkerian \$50.

YOUGHAKIN TZNOUNT - CHRISTMAS:

Mr. & Mrs. Antranik & Armine Dulbinci \$100, Mrs. Aline Huni \$50.

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Կիրակի, 15 Մարտ 2020 Ս. Պատարագի անարտին
կ. ե. Ժամը 2-ին

ANNUAL GENERAL MEMBERSHIP ASSEMBLY

Sunday, March 15, 2020 at 2:00 pm

After the Holy Mass



LES FÊTES RELIGIEUSES IMPORTANTES DE L'ANNÉE 2020 SELON LE CALENDRIER DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE

05/01/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԵՆՆՆԵԱՆ Vigile de la Nativité et de la Théophanie, Veille de Noël
06/01/2020	SOURP DZNOUNT / ՍՈՒՐԲ ԵՆՈՒՆԷՆ ԵՒ ԱՍՏՈՒԿԵՅԱՑՆՈՒԹԻՒՆ Noël et Epiphanie
13-14/02/2020	DIARNENTARATCH / ՏԵԱՈՆԸՆԴԱՌԱԶ Fête de la Chandeleur, Présentation de Notre Seigneur au Temple, à 40 jours.
20/02/2020	VARTANANTS / ՎԱՐՎԱՆԱՑ Fête de saint Vartan et de ses 1036 compagnons d'arme
23/02/2020	POUN PAREQUENTAN / ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Carnaval - Début du Carême
28/02/2020	MOUDN I VIRAB / ՍՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ Fête de St. Grégoire l'Illuminateur, commémoration de son emprisonnement.
05/04/2020	DZAGHGAZART / ԵՄԱԿԱԶԱՐԴ Dimanche des Rameaux : entrée du Christ à Jérusalem
07/04/2020	AVEDOUM / ԱՎԵՏՈՒՄ Annonciation à la Sainte Vierge Marie
09/04/2020	AVAK HINKCHAPTI / ԱՎԱԳ ԶԻՆԳԵԱԲԹԻ Jeudi Saint. La Cène, Lavement des pieds, Service des Ténèbres
10/04/2020	AVAK OURPAT / ԱՎԱԳ ՈՒՐՔԱԹ Vendredi Saint. Commémoration de la Passion et d'Ensevelissement
11/04/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ Samedi Saint. Vigile pascale.
12/04/2020	SOURP HAROUTYUN (ZADIG) / ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ (ԶԱՏԻԿ) Pâques. Résurrection de Notre Seigneur Jésus-Christ.
13/04/2020	MERELOTS / ՄԵՐԵԼՈՑ Lundi de Pâques (Requiem pour tous les défunts).
21/05/2020	HAMPARTSOUM / ԶԱՐԱՐՁՈՒՄ Ascension du Christ
31/05/2020	HOKEKALOUSD / ԶՈԳԵԳԱԼՈՒՄ Pentecôte
14/06/2020	ETCHMIADZINE / ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ Fête de la Cathédrale Saint Etchmiadzine
19/07/2020	VARTAVAR / ՊԱՅԵՄՈՒՎԵՐՊՈՒԹԻՒՆ (ՎԱՐՎԱԿՈՒ) Transfiguration de Notre-Seigneur Jésus-Christ
16/08/2020	VERAPOKHOU — KHAGHOGHORHNEK / ՎԵՐԱԹՈՒՄ Assomption de la Sainte Vierge. Bénédiction du raisin
13/09/2020	KHATCHVERATS / ԽԱՉՎԵՐԱՑ Exaltation de la Sainte Croix.
10/10/2020	TARKMANTCHATS / ԹԱՐԿԱՆՉԱՑ Fête de la découverte de l'écriture arménienne et de la traduction de la Bible.
28/11/2020	SOURP THADEOS — BARTOUGHIMEOS / ԹԱԴԵՆՍ-ԲԱՐՊՈՒԴԻՍԵՆՍ Fête de nos premiers Illuminateurs Apôtres Thaddée et Barthélémy





ՕՐՅՆՈՒԹԵԱՄՐ՝
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի
Բարեբան Առաջնորդ Գանատահայոց Թեմի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄՐ՝
Եկեղեցւոյ ACYOC «ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱԿԱՐ



Երիտասարդներու

Օրհնութիւն

Մասնակցութեամբ՝

«Կոմիտաս» Երգչախումբին

Կատակերգութիւն

Եւ պար

Զերմ մթնոլորտ DJ
Էմիլի հետ

Հիւրասիրութիւն
Վիճակահանութիւն



ԵՐԻՏԱՍԱՐՆԵՐՈՒ
ՕՐՅՆՈՒԹԵԱՆ ՕՐ

Շաբաթ, 22 Փետրուար 2020,
Ժամը 18:30-ին, «Մարի
Մանուկեան» սրահին մէջ:

Տոմներու համար հեռաձայնել
Հայկին՝ (514) 619-7098
Կամ
Եկեղեցւոյ գրասենեակ՝
(514) 279-3066



Մուտքի սակ՝ \$25

Երեխաներու (5-12)
սակ՝ \$15



ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն Չորեքշաբթի երեկոյան ժամը 7:00-ին

Փետրուար 26 – Ապրիլ 9, 2020

Փետրուար 26 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան

*Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Լիլիթ Մարտիրոսեան,
Շողիկ Գրիգորեան եւ Թամար Սաղըրեան:*

Մարտ 4 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Գեորգ Զինյ. Արեան

Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակուլթային Միութիւն

Մարտ 11 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան

Պահոց Ընթրիք – Տիկ. Թալին Թանաշեան

Մարտ 18 – Քարոզիչ՝

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Պահոց Ընթրիք –

*Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան
եւ Տիգրանեան Ընտանիք*

Մարտ 25 – Քարոզիչ՝

Գերշ. Հ. Գեորգ Ծ. Կրդ. Չապարեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Սունիա Գալայճեան եւ Սօսի Լազազաշեան

Ապրիլ 1– Քարոզիչ՝

Պատուելի Յովհաննէս Սվաճեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 9– Աւագ Հինգշաբթի

Քարոզիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան

*Պահոց Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ
«Մարի Սանուկեան» սրահին մէջ*

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

📧 stgregorychurch@gmail.com 📱 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

🌐 www.saintgregory.ca



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՍՏԻՅ ՃԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 29 Փետրուար 2020-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ
մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

***Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան***



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատրակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:
- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել
Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն
անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2